683 Ով Տեր, Քեզ հուսացի, թող երբեք չամաչեմ,

1. Ով Տեր, Քեզ հուսացի, թող երբեք չամաչեմ,
Ապրեցրո՛ւ տկարիս, փրկի՛ր ինձ, կաղաչեմ:
Ակա՛նջ դիր աղոթքիս, իմ հույսիս վե՛մ եղիր
Եվ ամուր բերդի պես պաշտպանի՛ր:

Տե՛ր իմ, ինձ ազատիր
Ամբարիշտ ձեռքերից,
Չար մարդկանց խորհրդից,
Թունավոր խոսքերից:
Ինձ համար վե՛մ եղիր,
Ամրոց ու ապավեն,
Քո հզոր բազուկին կսպասեմ:

2. Չար մարդիկ ինձ համար չար խորհուրդ են անում,
Դնելով ծուղակներ՝ ինձ ցավ են պատճառում:
Ասում են՝ հալածե՛ք, խփե՛ք, թող թուլանա,
Մենակ է, ազատող էլ չկա:
Ո՛ւմ Աստված, մոտ եղի՛ր,
Ինձնից մի՛ հեռանա,
Օգնության ձեռք մեկնիր,
Դավին չեմ դիմանա,
Օգնի՛ր, որ քեզ երգեմ
Քո ուժով զորացած,
Հավիտյան Քեզ գովեմ, իմ Աստված: